600.0049.29.10.01.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հոկտեմբերի 2001 թվականի №49
ք. Երևան

2001-2002թթ. ձմռան ժամանակաշրջանի կենտրոնացված ջեռուցման սակագների մասին

Ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի ա) կետով և 21-րդ, 22-րդ հոդվածներով, ելնելով 2001-2002 թթ. ձմռան ժամանակաշրջանում հանրապետությունում ջեռուցման ապահովման անհրաժեշտությունից, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է** .

1. Սահմանել՝

1.1. 2001-2002թթ. ձմռան ժամանակաշրջանում ջերմային էներգիա մատակարարող ընկերությունների կողմից իրականացվող կենտրոնացված ջեռուցման հետևյալ սակագները՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

N	Ընկերության անվանումը	Ջեռուցման տևողությունը (օր)	2001-2002թթ. սակագները		
			Բնակչության ջեռուցման համար		Այլ սպառողների ջեռուցման համար (դր/Գկալ)
			(դր/քմ)	(դր/Գկալ)	
1	Երևանի քաղաքապետարանի «Ջերմային տնտեսություն» ՊՓԲԸ	90	1500	11068	11068
2	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ	90	1536	11333	11333

3	«Գյումրու ջերմամատակարարում» ՓԲԸ	120	2644	10478	10478
4	«Հայգազարդ» ՊՓԲԸ-ի «Գյումրիջերմո» ջերմամատակարարման արտադրամաս (գ. Մայիսյան)	120	1568	8417	-
5	«Արև» ՓԲԸ (ք.Վեդի)	90	1362	10530	10530

1.2. 2001-2002թթ. ձմռան ժամանակաշրջանում «Հայգազարդ» ՓԲԸ-ի «Գյումրիջերմո» ջերմամատակարարման արտադրամասի կողմից ջեռուցման նպատակով առաքվող ջերմային էներգիայի սակագինը՝ 8286.2 դրամ/Գկալ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

1.3. 2001-2002թթ. ձմռան ժամանակաշրջանում «Հրազդանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից ջեռուցման նպատակով առաքվող ջերմային էներգիայի սակագինը՝ 7836,0 դրամ/Գկալ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

1.4. Բնակչությանը առաքվող ջերմային էներգիայի՝ մեկ քմ բնակելի մակերեսի համար սահմանված սակագինը կիրառելի է ջերմային էներգիայի հաշվառքի սարքերի բացակայության դեպքում: Հաշվառքի սարքերի առկայության դեպքում գործում է մեկ Գկալ-ի համար սահմանված սակագինը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2001թվականի նոյեմբերի 29-ից:

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի նախագահ՝ **Վ. Մովսեսյան**